ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2025 թվականի N 01-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերը, 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի տարեկան հաշվետվությանը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

3. Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2024 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Ս. Սարգսյանին.

1) Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի համապատասխան քաղաքացիական

ծառայության պաշտոնների անձնագրերում նախատեսված մասնագետներին ներկայացվող պահանջների վերաբերյալ փոփոխությունների մասին առաջարկներ,

2) ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության դեղեր ներմուծելու ոլորտում վերահսկողության արդյունքում արձանագրված օրենսդրական խնդիրները և դրանք կարգավորելու վերաբերյալ առաջարկություններ:

5. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Տ. Հակոբյանին առաջարկել քննարկել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերի հարցերը կրճատելու վերաբերյալ հարցը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ